# ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ

22.01.2019 14:51



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 21.01.2019թ. թիվ 2/15-Ա որոշմամբ փոփոխվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կազմը, այդ թվում՝ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի անդամ, փաստաբան Հերիքնազ Տիգրանյանին կփոխարինի փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու **Ռուբեն Մելիքյանը**, քանի որ խորհրդի 21.01.2019թ. մեկ այլ որոշմամբ Հերիքնազ Տիգրանյանի փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցվել է՝ 7-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր հանդիսանալու հիմքով:



ՀՀ փաստաբանների պալատը և ՀՀ փաստաբանական դպրոցը **շնորհակալություն են հայտնում Հերիքնազ Տիգրանյանին** արդյունավետ համագործակցության համար և մաղթում բեղմնավոր աշխատանք ՀՀ ազգային ժողովում՝ ի նպաստ Մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարական ու իրավական պետության հիմնարար արժեքների պահպանման:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })